Արձանագրություն 3

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.10.2018թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Ա. Մարտիրոսյան - ՀՀ ՖՆ հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Գրիգորյան - ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ

Մ. Միքաելյան - ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում է՝

Հանձնաժողովի նախագահ

Վ. Հարությունյան - ՀՀ ՖՆ հաշվապահական հաշվառման վարչության պետ – գլխավոր հաշվապահ

<u>Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման և որակավորման փաստաթղթերի վերաբերյալ</u>

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի դրական եզրակացության համաձայն՝ «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալները համապատասխանել են իրականությանը:

2. «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին (հրավերով սահմանվել է, որ ապրանքները պետք է լինեն 94*7.5 մմ, այնինչ մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրում ապրանքի չափը նշված է 95*8 մմ):

Հանձնաժողովը որոշեց.

1. Ծանուցել «Լիգա-Տեք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել սույն թվականի հոկտեմբերի 10-ին ժ. 11:30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

հանձնաժողովի անդամներ՝	_____	Ա. Մարտիրոսյան
	_____	Ա. Գրիգորյան
	_____	Մ. Միքաելյան
Գնումները համակարգող՝	_____	Ա. Աղաբաբյան